

ԳՐԱԲԱՐԻ ՈՐՈՇԶԻ ՇԱՐԱԴԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՃԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐ

Յ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Որոշչի շարադասությունն ու համաձայնությունը ինչպես հայերենի այլ դրսևորումների, այնպես էլ գրաբարի շարահյուսական համակարգի կարևորագույն օղակներից են: Անցնելով հայերենի զարգացման տարբեր փուլերով՝ շարահյուսական այդ իրողությունները ենթարկվել են լուրջ փոփոխությունների, հանդես բերել բոլորովին նոր որակներ՝ պայմանավորված լեզվի ներքին, առավել կենսունակ օրհնաչափություններով: Եթե գրաբարում որոշիչն ուներ ազատ շարադասություն, այսինքն՝ կարող էր դրվել որոշյալից և՛ առաջ, և՛ հետո, ըստ որում հետադասվելիս սովորաբար հոլովում էր՝ հոլովով ու թվով համաձայնելով իր լրացյալին, իսկ նախադասվելիս ընդհանրապես մնում էր անհամաձայն, ապա արդի գրական հայերենում (արևելահայ թե արևմտահայ), ինչպես նաև բարբառներում ձևավորվել են որոշչի շարադասության և համաձայնության բոլորովին նոր կանոններ. ա) ընդհանրացել ու կայունացել է որոշչի նախադաս գործածությունը, բ) իսպառ վերացել է համաձայնությունը որոշյալի հետ:

Չնայած գրաբարի որոշչի շարադասության ու համաձայնության հարցերը հատուկ ուշադրության են արժանացել շատ քերականների կողմից, բայց, որքան էլ զարմանալի է, եղած կարծիքները բավական տարբեր են միմյանցից, և այսօր էլ դեռևս շարունակվում են արտահայտվել միանգամայն իրարամերձ ըմբռնումներ: Տարակարծությունները վերաբերում են այն հարցին, թե արդյոք գրաբարում, ազատ շարադասության պայմաններում, գերակշռողը ո՞ր կիրառություններն էին՝ նախադասները, թե՞ հետադասները, համաձայնեցվածները, թե՞ չհամաձայնեցվածները: Նման հարցադրումը կարևորվում է նրանով, որ նրա ճշգրիտ պատասխանի դեպքում միայն հնարավոր է գիտական հստակ պատկերացում կազմել շարահյուսական նշված երևույթների պատմական զարգացումների իրական ընթացքի վերաբերյալ և զալ համոզիչ, հիմնավոր եզրահանգումների՝ լեզվի թե՛ գրավոր, թե՛ բանավոր տարբերակների առնչությամբ:

Գրաբարի որոշչի շարադասության և համաձայնության ուսումնասիրությամբ զբաղվողներին կարելի է բաժանել երեք խմբի: Առաջինի մեջ մտնում են նրանք (Գ. Ավետիքյան, Ա. Բագրատունի, Չալըխյան, Ա. Այտընյան, Մ. Աբեղյան, Պ. Շարաբխանյան և այլք), որոնք, նշելով, որ գրաբարում որոշիչները դրվում են որոշյալից և՛ առաջ, և՛ հետո, որ հետադասվելիս սովորաբար հոլովով ու թվով համաձայնում են իրենց որոշյալին, իսկ նախադասվելիս ընդհանրապես չեն համաձայնում, հատուկ կերպով չեն խոսել այդ կիրառություններից որևէ մեկի առավել կամ պակաս տարածված լինել-չլինելու մասին: Միևնույն երկրորդ և երրորդ խմբերի ներկայացուցիչները անդրադարձել են նաև նշված հարցերին և արտահայտել, ինչպես ասվեց, միանգամայն տարբեր, իրարամերձ կարծիքներ: Այժմ դրանց մասին առանձին-առանձին:

XIX դարի քերականներ Մ. Գաբազանյանն ու Ս. Գաբամաճյանը գրաբարի որոշչի համար սովորականը, այսինքն՝ բնորոշն ու հիմնականը համարում են նրա հետադաս կիրառությունն ու համաձայնեցվելը: Ահա. «Ածականները (որոշիչները - Հ. Ա.) սովորաբար գոյականէն ետքը կը դրուին և անոր հետ մեկտեղ կը հոլո-

վիճ¹, որոշիչները «Պէտք է գիտնալ սակայն թէ սովորաբար գոյականէն ետքը կը դրուին և մէկտեղ կը հոլովին»²:

Որոշիչների համաձայնեցվածության մասին Ստ. Մալխասյանցն ավելին է ասում: Այդ կապակցությամբ նա գրում է. «Որոշիչը որոշյալից թէ առաջ դրուած լինի, թէ հետո նորա հետ համաձայնում է թուով և հոլովով»³: Ստացվում է, որ համաձայնեցված որոշիչները ոչ թէ այս կամ այն չափով գերակշռում են, այլ համատարած բնույթ են կրում, որ իրականում բոլորովին այլ է:

Գրաբարի որոշիչ շարադասության և համաձայնության վերաբերյալ ուշագրավ դիտողություն է արել Վ. Խալաթյանը: Չնայած նա ևս ընդունում է, որ գրաբարն առանձնապես խտրություն չի դնում նախադաս և հետադաս որոշիչների գործածության մեջ, որ նրա համար այդ երկու ձևերն էլ հավասարապես գործածական էին, սակայն անում է մի կարևոր հավելում, այն, որ գրաբարում ավելի տարածված էին նախադաս չհամաձայնեցված ածական որոշիչները, քան հետադաս համաձայնեցվածները. «Մեր կարծիքով գրաբար լեզուն չի նախընտրում հետադաս որոշիչ գործածությունը նախադաս անհոլով ձևից, այլ մեր մատենագիրների մոտ գտնվող փաստերն այն են ասում, որ գրաբարի համար գործածական էր երկու ձևն էլ, սակայն ավելի շատ է տարածված նախադաս և անհոլով ածականի գործածությունը, քան հետադաս համաձայնեցվածի»⁴:

Պրոֆ. Ս. Ղազարյանը, խոսելով նախադաս և չհամաձայնեցված որոշիչների գործածության մասին, նշում է, որ դրանք «իշխող են եղել ընդհանրապես խոսակցական լեզվում ու բարբառներում և ավելի ու ավելի են տարածվել, մինչև վերջնականապես դարձել են իշխող երևույթներ հայերենի հետագա շրջանների շարահյուսության մեջ»⁵: Ըստ նրա, V դարի գրաբարում այդ երևույթները հանդես էին գալիս սուկ իբրև նոր ուրվագծվող ընդհանուր միտումներ. «Ածականների, թվականների և գոյականների անհամաձայնությունը,- գրում է նա,- սկսվել է շատ վաղուց, V դարից արդեն ուրվագծվում էին որոշիչների նախադաս գործածության և չհամաձայնվելու ընդհանուր տենդենցները»⁶: Բնականաբար այս ընդհանուր միտումները հետագա դարերում ավելի ու ավելի պիտի ծավալվեին, հաճախակի դառնային: «Վերոհիշյալ դարերից (VI-VII - Հ. Ա.) սկսած,- շարունակում է նա,- զգալի չափով փոփոխվում է նաև գրաբարի շարադասությունը: Հաճախակի են դառնում անհամաձայնեցումն ու նախադաս որոշիչների գործածությունը: Մի շարք հեղինակներ գրում են համարյա թե աշխարհաբարին հատուկ շարադասության նման»⁷: Չնայած այս հանգամանքին՝ հեղինակի կարծիքով, գրաբարում դեռևս պահպանվում էր հետադաս և համաձայնեցված որոշիչների գերակշռությունը, որը խախտվում է միայն բավականին ուշ՝ միջին հայերենի շրջանից: Ահա. «Գրաբարի նախադասության անդամների կապակցության ուշագրավ կանոններից մեկը՝ որոշիչ հետադաս գործածության ու որոշյալի հետ համաձայնեցվելը, միջին դարերում խախտվել էր. որոշիչները գերակշռող մեծամասնությամբ նախադաս էին դրվում և չէին համաձայնեցվում»⁸:

¹ Մ. Գարագաշյան, Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն, Կ.Պոլիս, 1891, էջ 31:

² Ս. Գաբամանյան, Նոր քերականութիւն հայերէն գրաբար լեզուի, Կ.Պոլիս, 1897, էջ 46:

³ Ստ. Մալխասյանց, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 93:

⁴ Վ. Խալաթյան, Գրաբարի մի քանի առանձնահատկությունները Եզնիկի լեզվում, Եր., 1944 (դիսերտացիա), էջ 23:

⁵ Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 124:

⁶ Նույն տեղում, էջ 94:

⁷ Նույն տեղում, էջ 186:

⁸ Նույն տեղում, էջ 268:

Ակադեմիկոսներ Է. Աղայանն ու Գ. Ջահուկյանը, բնութագրելով հատկապես V դարի գրաբարի շարահյուսական համակարգը, նույնպես հաստատում են, որ այդ ժամանակաշրջանի գրաբարում գերակշռողը, իբրև ընդհանուր օրինաչափություն հանդես եկողը որոշիչների հետադաս և համաձայնեցված գործածությունն էր. «... 5-րդ դարում, հատկապես առաջին կեսի մատենագրության մեջ, գրում է Է. Աղայանը,- ավելի գերակշռող և որպես ընդհանուր օրինաչափություն հանդես եկողը որոշիչ ետադաս գործածությունն է»⁹: Եվ քանի որ հետադաս որոշիչը գրաբարում սովորաբար հոլովով ու թվով համաձայնում էր իր որոշյալին, ուստի պիտի եզրակացնել, որ խոսքը վերաբերում է նաև համաձայնեցված որոշիչների գերակշռող, օրինաչափ լինելուն: Գ. Ջահուկյանը հենց այսպես էլ բնութագրում է նշված երևույթը. «Գրաբարի շարահյուսական համակարգը (5-րդ դարի- Հ. Ա.) բնութագրվում է որոշիչների... հիմնականում ետադաս գործածությանը և նրանց գերակշռող մեծամասնության համաձայնեցմամբ որոշյալների հետ»¹⁰: Անվանի գիտնականի տեսադաշտից չի վրիպել նաև նշված շրջանի գրաբարում առկա «որոշիչների նախադաս և անհամաձայն գործածության հաճախությունը», որոնք նա համարել է իբրև «այս շրջանում գրական լեզվից կատարվող բարբառային շեղումներ»¹¹: Բնութագրելով գրաբարի հաջորդ երկու՝ հետդասական (VI-VII դարեր) և նախամիջին (VIII-XI դարեր) ենթաշրջանների շարահյուսական զարգացումները՝ Գ. Ջահուկյանը կոնկրետ նշումներ չի արել որոշիչների վերաբերյալ: Միայն ընդհանուր կերպով ասվածից՝ «Գրաբարի մեջ խոսակցական-բարբառային լեզվի օգտին կատարվող նախկին շեղումներն այս ենթաշրջանում (հետդասական - Հ. Ա.) բազմաձևում են, առաջանում են նոր շեղումներ...», «... Այս ենթաշրջանում (նախամիջին - Հ. Ա.) գրաբարի որոշ հուշարձաններում նախկին նորմերից կատարվող շեղումների տիրապետող լինելը թույլ է տալիս խոսելու գրաբարի որոշ տարբերակների խոսակցական հիմքի մասին»¹², պիտի ենթադրել, որ խոսքը վերաբերում է նաև որոշիչների շարադասական և համաձայնական փոփոխությունների աստիճանական ծավալմանը: Իսկ հաջորդ՝ միջին գրական հայերենի կիլիկյան նորմավորման ենթաշրջանի (XII-XIV դարեր) վերաբերյալ արդեն կոնկրետ նշվում է, որ այդ ժամանակների «Ծարահյուսության համար... բնորոշ է որոշիչ և հատկացուցչի նախադաս գործածությունը»¹³:

Գրաբարի որոշիչ շարադասության և համաձայնության հարցերը մեզ հետաքրքրող տեսանկյունից առանձին քննության նյութ է դարձել «Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում» մենագրական ուսումնասիրության մեջ, որտեղ պաշտպանվում է հակառակ կարծիքը, այն, որ գրաբարում գերակշռում են ոչ թե հետադաս և համաձայնեցված, այլ նախադաս և չհամաձայնեցված որոշիչները, ինչպես. «Ծիշտ է, նրանք (որոշիչները - Հ. Ա.) գործածվում են և՛ նախադաս, և՛ հետադաս, բայց գերակշռողն ու բնորոշը ոչ թե նրանց հետադաս, այլ նախադաս գործածությունն է: Դա հաստատվում է 5-րդ դարի ինքնուրույն և թարգմանական գրականության փաստական տվյալներով»¹⁴: Այնուհետև՝ «5-րդ դարի գրաբարում «որոշիչների գերակշռող մեծամասնությունը ոչ թե համաձայն, այլ անհամաձայն է դրվում»¹⁵:

Կարելի է ասել, նույն բանն է ասված նաև գործող գրաբարի ձեռնարկում, ինչպես. «Որոշիչը դրվում է որոշյալից և՛ առաջ, և՛ հետո, սակայն տարածվածը

⁹ Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, Բ. 2, Եր., 1962, էջ 260:

¹⁰ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 39:

¹¹ Նույն տեղում, էջ 41-42:

¹² Նույն տեղում, էջ 43:

¹³ Նույն տեղում, էջ 48:

¹⁴ Հ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Եր., 1972, էջ 10:

¹⁵ Նույն տեղում, էջ 22:

ճախադաս գործածությունն է»¹⁶, «Ռոռշիչը, եթե ճախադաս է, սովորաբար հոլովով ու թվով չի համաձայնում իր լրացյալին, իսկ եթե ետադաս է՝ համաձայնում է»¹⁷: Ուրեմն, եթե տարածվածը ճախադաս որոշիչներն են, որոնք սովորաբար անհամաձայն են մնում, պիտի եզրակացնել, որ համաձայնության առումով էլ տարածվածը չհամաձայնված որոշիչներն են:

Բնարկվող հարցին մասնակիորեն անդրադարձել է պրոֆ. Վ. Քոսյանն իր «Գրաբարի բառակապակցությունները» ծավալուն ուսումնասիրության մեջ, որտեղ որոշիչ-որոշյալի կապակցությունը քննված է ամենայն մանրամասնությամբ: Այստեղ հստակորեն շեշտված է այն միտքը, որ եթե Աստվածաշնչում ածական որոշիչներն ավելի հետադաս էին, ապա մյուս երկերում (ինքնուրույն կամ թարգմանական), ընդհակառակը, ավելի ճախադաս էին լինում. «Նկատելի է, որ Աստվածաշնչում ածականներն ավելի շատ ետադաս էին գործածվում որոշիչ պաշտոնով, իսկ մյուս երկերում (ինքնուրույն կամ թարգմանական) ճախադաս ածականներն ավելի հաճախակի էին հանդիպում»¹⁸: Ասվածից պիտի եզրակացնել, որ հեղինակն ամենայն հավանականությամբ այն կարծիքին է եղել, որ գրաբարում առավել տարածվածը չհամաձայնեցված որոշիչներն են՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ածական որոշիչները հաճախ ավելի շատ են, քան մյուս տեսակի բոլոր որոշիչները՝ միասին վերցրած:

Գրաբարի որոշիչ ինչպես արտահայտության, այնպես էլ շարադասության ու համաձայնության հարցերը վերջերս նորից հանգամանորեն քննվել են է. Մկրտչյանի «Պարզ ճախադասության կառուցվածքային առանձնահատկությունները գրաբարում» դոկտորական աշխատանքում: Ընդունելով հանդերձ, որ որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարի ուսումնասիրված թեմաներից է, այնուամենայնիվ հեղինակը անհրաժեշտ է համարել կրկին անդրադառնալ այդ թեմային՝ փորձելով «այն ներկայացնել համակարգված, բերել լրացուցիչ փաստեր և ըստ հնարավորին վիճելի հարցերը հստակեցնել»¹⁹ (ընդգծումը մերն է - Հ. Ա.): Աշխատության մեջ նշվում է, որ որոշիչի շարադասության և համաձայնության հարցում, այո՛, կան տարածայնություններ, և որ հեղինակի նպատակն է եղել, առանձին-առանձին քննելով ճախադաս և հետադաս որոշիչների համաձայնությունը, հասնել ճիշտ եզրահանգումների. «Ռոռշիչի և որոշյալի շարադասության ու նրա հետ կապված համաձայնության հարցում կան տարբեր կարծիքներ, ուստի առանձին-առանձին քննվում է հետադաս և ճախադաս որոշիչների համաձայնությունը՝ նպատակ ունենալով հասնել ճիշտ եզրակացությունների»²⁰: Այսպիսի մեթոդով քննությունը հեղինակին բերել է այն եզրակացության, ինչին հասել էին շատերը նրանից առաջ, այն է՝ գրաբարում գերակշռում էին համաձայնեցված որոշիչները: Ահա. «Այսպիսով, առանձին-առանձին քննելով որոշիչ ճախադաս և հետադաս գործածությունները և որոշիչ ու որոշյալի համաձայնության հարցերը, գալիս ենք այն եզրակացության, որ հետադաս որոշիչները մեծ մասամբ համաձայնում են որոշյալներին. և քանի որ ճախադաս որոշիչների մեջ էլ կան համաձայնողներ, ուրեմն որոշիչների գերակշռող մասը համաձայնում է»²¹ (ընդգծումը մերն է - Հ. Ա.):

¹⁶ Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2001, էջ 185:

¹⁷ Նույն տեղում, էջ 186:

¹⁸ Վ. Քոսյան, Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980, էջ 39:

¹⁹ Է. Մկրտչյան, Պարզ ճախադասության կառուցվածքային առանձնահատկությունները գրաբարում (սեղմագիր), Եր., 1999, էջ 36-37:

²⁰ Նույն տեղում, էջ 37:

²¹ Նույն տեղում, էջ 42:

Գրաբարի որոշիչ շարադասության և համաձայնության վերաբերյալ կարծիքների նման անմիօրինակությունն ու հակասականությունը պետք է բացատրել նրանով, որ ցարդ որևէ լեզվաբանի կողմից չի կատարվել նյութի փոքրիշատե հիմնավոր վիճակագրական քննություն, որը կարող էր հիմք դառնալ բոլորովին այլ եզրահանգումների ու բնութագրումների համար: Եղած բացը լրացնելու համար առաջին անգամ դիմում ենք նման քննության՝ ուսումնասիրության համար նյութ ընտրելով դասական գրաբարի ենթաշրջանից (V դար) Եզնիկի «Եղծ աղանդոց» և Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», իսկ նախամիջին ենթաշրջանից (VIII-XI դարեր)՝ Գրիգոր Նարեկացու «Մատյանը» և Ա. Լաստիվերցու «Պատմութիւնը», ինչպես նաև՝ VI-XI դարերի ավելի քան երկու տասնյակ հեղինակների այն երկերը կամ նրանց առանձին հատվածները, որոնք ամփոփված են Պ. Ծարաբխանյանի «Հայոց լեզվի պատմության քրեստոմատիա» բուհական ձեռնարկում: Վիճակագրությունը ներկայացնելիս հաշվի են առնվել հետևյալ սկզբունքները.

1. Վիճակագրության մեջ ընդգրկվել են տարբեր խոսքի մասերով, ինչպես նաև զանազան կապակցություններով և սեռականով արտահայտված որոշիչները՝ իրենց ամբողջ հաճախականությամբ:

2. Ծարադասության դեպքում նկատի են առնվել բոլոր տեսակի որոշչային կիրառությունները՝ անկախ նրանց կից կամ հեռու, միայն նախադաս կամ միայն հետադաս դրվելուց և այլն:

3. Համաձայնեցված կամ չհամաձայնեցված որոշիչների մեջ ներառնվել են միայն նրանք, որոնք դրված են թեք հոլովներով*, այսինքն՝ եզակի և հոգնակի բոլոր հոլովներով, բացի եզակի ուղղականից և հայցականից՝ անկախ նրանց հոլովական և թվային համաձայնության այլևայլ առանձնահատկություններից:

4. Համաձայնեցված են համարվել բոլոր այն որոշիչները, որոնք, բացի եզակի ուղղականից և հայցականից, դրված են եզակի և հոգնակի մյուս բոլոր հոլովներով՝ համաձայնելով իրենց լրացյալներին հոլովով ու թվով կամ միայն դրանցից մեկով: Համաձայնեցված որոշիչների շարքից դուրս են թողնվել եզակի ուղղականով և հայցականով դրվածները և ահա թե ինչու: Գրաբարում եզակի ուղղականն ու հայցականը բառի ուղիղ, անփոփոխելի ձևեր են, հետևաբար, իրենց լրացյալներին կապվում են ոչ թե համաձայնությամբ, այլ առդրությամբ: Համաձայնությունը ենթադրում է կապակցվող միավորների համապատասխանեցումը որոշակի քերականական ձևով, իսկ եզակի ուղղականն ու հայցականը զուրկ են նման ձևից: «Համաձայնությունը կապակցման այն եղանակն է, - գրում է պրոֆ. Ռ. Իշխանյանը, - որի դեպքում երկու կապակցվող միավորներ (երկու բառերը) քերականորեն որոշակի ձևով համապատասխան են դառնում միմյանց»²², իսկ արդի հայերենում «Ռորոշիչը քերականական մշտական (կայուն) ձև չունի»²³: Այս նույնը վերաբերում է նաև եզակի ուղղականով և հայցականով դրված գրաբարի որոշիչներին, որոնք ևս, ինչպես նշվեց, չունեն հոլովական ձևային վերջավորություն, ուստի և չեն կարող դիտվել իբրև համաձայնեցված օրինակներ: Պետք է ասել, որ գրաբարի բոլոր քերականություններում էլ որոշիչ համաձայնեցումը նույն կերպ է ըմբռնվել:

Երբ քերականներն ասում են, թե հետադաս որոշիչները սովորաբար համաձայնում են, իսկ նախադասներն ընդհանրապես չեն համաձայնում, նկատի ունեն

* Այստեղ և շարունակության մեջ նկատի են առնվել նաև հոգնակի ուղղականի ձևերը:

²² Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 21-22:

²³ Նույն տեղում, էջ 132:

նրանց մի կողմից՝ փոփոխված, այսինքն՝ հիշված, մյուս կողմից՝ անփոփոխ՝ չհիշված ձևերը՝ հիշվածները համարելով համաձայնեցված, իսկ չհիշվածները՝ չհամաձայնեցված: Հաճախ քերականները չեն էլ օգտագործում համաձայն կամ անհամաձայն տերմինները՝ բավարարվելով հիշվում են, չեն հիշվում արտահայտություններով, քանի որ որոշիչների հիշված լինել-չլինելով էլ հենց պայմանավորված է նրանց համաձայնեցված լինել-չլինելը: Այս մասին են խոսում այն փաստերը, որ որոշիչ համաձայնության վերաբերյալ դիմելով բնագրային վկայությունների՝ քերականները չեն հիշատակում օրինակներ եզակի ուղղականով և հայցականով՝ բացառությամբ այն եզակի դեպքերի, երբ հիշվական հարացույցի պատկերը տրվում է ամբողջությամբ:

5. Չհամաձայնեցված են համարվել այն բոլոր որոշիչները, որոնք անփոփոխ՝ եզակի ուղիղ ձևով դրվել են եզակի կամ հոգնակի այս կամ այն թեք հիշվածների վրա:

Վիճակագրության տվյալները ներկայացվել են հետևյալ կառուցվածքով: Նախ տրվել է տվյալ երկի որոշիչների ընդհանուր քանակը, ապա առանձին-առանձին նշվել նախադասներն ու հետադասները, եզակի ուղղականով ու հայցականով և թեք հիշվներով դրվածները, համաձայնեցվածներն ու չհամաձայնեցվածները: Ջուզահետաբար փակագծերում տրվել է տարբեր կիրառությունների շարադասական հարաբերակցությունը՝ նախադասները նշելով թեք ուղղահայաց գծից առաջ, հետադասները՝ նրանցից հետո եղած թվերով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ածականով արտահայտված որոշիչներն ավելի շատ են, քան մյուս տեսակի բոլոր որոշիչները միասին վերցրած, տալիս ենք նաև դրանց վիճակագրությունը՝ դարձյալ վերը նշված կառուցվածքով: Ահա.

Որոշիչների շարադասությունն ու համաձայնությունը

ա) Ըստ Եզակի «Եղծ աղանդոց» երկի

Որոշիչների ընդհանուր քանակը՝	1435	
1. Նախադաս՝	1072	- 74,70%
2. Հետադաս՝	363	- 25,29%
Եզակի ուղղականով և հայցականով՝ **	510/341/169/	- 35,54%
Թեք հիշվներով՝	925 /731/194/	- 64,45%
1. Համաձայն՝	402 /234/168/	- 43,45%
2. Անհամաձայն՝	523 /497/26	- 56,54%

Ածական որոշիչներ

Ընդամենը՝	636	- 44,32%
1. Նախադաս՝	445	- 69,96%
2. Հետադաս՝	191	- 30,03%
Եզակի ուղղականով և հայցականով՝	217/132/85/	- 34,41%
Թեք հիշվներով՝	419 /313/106/	- 65,38%
1. Համաձայն՝	162/56/106	- 38,66%
2. Անհամաձայն՝	257 /257/0/	- 61,36%

Միջանկյալ կարգով նշենք, որ որոշիչ շարադասության և համաձայնության շատ հետաքրքիր պատկեր է ներկայացնում Եզակիին վերագրվող 7-8 էջանոց

** Այստեղ և հետագայում նկատի են առնվել նաև սեռականով որոշիչները:

«Խրատքը», որ հրատարակված է կից «Եղծ աղանդոց»-ին: Այն, նախատեսված լինելով ժողովրդական լայն զանգվածների համար, գրված է հենց ժողովրդական մտածողությամբ ու լեզվին բնորոշ պարզ, անպաճույճ լեզվով, մի բան, որին քիչ չափով չի նպաստել նաև նախադաս անհամաձայն որոշիչների համատարած դառնալը: Այսպես. նշված երկու գործածվել է ընդամենը 85 որոշիչ, որից 66-ն արտահայտված է ածականով, մյուսները՝ այլ խոսքի մասերով: Սրանցից 73-ը՝ 85,88 %-ը, նախադաս է, 12-ը՝ 14,11%-ը, հետադաս: Թեք հոլովներով գործածված 46 որոշիչներից համաձայնել է ընդամենը 3-ը՝ 6,5 %-ը, իսկ 43-ը՝ 93,5 %-ը, չի համաձայնել:

բ) Ըստ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի

Որոշիչների ընդհանուր քանակը՝	2670	
1. Նախադաս՝	2190	- 82,02%
2. Հետադաս՝	480	- 17,97%
Եզակի ուղղականով և հայցականով՝	838 /629/209/	- 31,38%
Թեք հոլովներով՝	1832 /1561/271/	- 68,61%
1. Համաձայն՝	388 /221/167/	- 21,17%
2. Անհամաձայն՝	1444 /1340/104/	- 78,60%

Ածական որոշիչներ

Ընդամենը՝	1546	- 57,90%
1. Նախադաս՝	1259	- 81,43%
2. Հետադաս՝	287	- 18,56%
Եզակի ուղղականով և հայցականով՝	454 /342/112/	- 29,36%
Թեք հոլովներով՝	1092 /917/175/	- 70,63%
1. Համաձայն՝	169 /61/108/	- 15,47%
2. Անհամաձայն՝	923 /856/67/	- 84,52%

գ) Ըստ Գր. Նարեկացու «Մատենան ողբերգության» երկի

Որոշիչների ընդհանուր քանակը՝	5236	
1. Նախադաս՝	3593	- 68,62%
2. Հետադաս՝	1643	- 31,37%
Եզակի ուղղականով և հայցականով՝	2083 /1286/797/	- 39,78%
Թեք հոլովներով՝	3153 /2305/848/	- 60,21%
1. Համաձայն՝	1228 /431/797/	- 38,94%
2. Անհամաձայն՝	1925 /1875/50/	- 61,05%

Ածական որոշիչներ

Ընդամենը՝	3827	- 73,09%
1. Նախադաս՝	2567	- 67,07%
2. Հետադաս՝	1260	- 24,06%
Եզակի ուղղականով և հայցականով՝	1465 /857/608	- 38,28%
Թեք հոլովներով՝	2362 /1710/652/	- 61,71%
1. Համաձայն՝	805 /180/625/	- 34,08%
2. Անհամաձայն՝	1557 /1531/26/	- 65,91%

դ) Ըստ Լաստիվերցու «Պատմութիւն» երկի

Որոշիչների ընդհանուր քանակը՝	1640	
1. Նախադաս՝	1335	- 81,40%
2. Հետադաս՝	305	- 18,59%
Եզակի ուղղականով և հայցականով՝	487 /315/167/	- 29,39%
Թեք հոլովներով՝	1158 /1020/138/	- 70,60%
1. Համաձայն՝	247 /143/104/	- 21,32%
2. Անհամաձայն՝	911 /877/34/	- 78,67%

Ածական որոշիչ

Ընդամենը՝	1041	- 63,47%
1. Նախադաս՝	911	- 87,51%
2. Հետադաս՝	130	- 12,48%
Եզակի ուղղականով և հայցականով՝	278 /193/85/	- 26,70%
Թեք հոլովներով՝	763 /718/45/	- 73,29%
1. Համաձայն՝	94 /50/44/	- 12,31%
2. Անհամաձայն՝	669 /668/1/	- 87,68%

ե) Ըստ VI-XI դարերի հեղինակների երկերի

Որոշիչների ընդհանուր քանակը՝	2057	
1. Նախադաս՝	1531	- 74,42%
2. Հետադաս՝	526	- 25,57%
Եզակի ուղղականով և հայցականով՝	709 /458/251/	- 34,46%
Թեք հոլովներով՝	1348 /1073/275/	- 65,53%
1. Համաձայն՝	449 /234/215	- 33,30%
3. Անհամաձայն՝	899 /839/60/	- 66,69%

Ածական որոշիչ

Ընդամենը՝	1169	- 56,80%
1. Նախադաս՝	900	- 76,98%
2. Հետադաս՝	269	- 23,01%
Եզակի ուղղականով և հայցականով՝	369 /247/122/	- 31,56%
Թեք հոլովներով՝	800/653/147/	- 68,43%
1. Համաձայն՝	194 /63/131/	- 24,25%
2. Անհամաձայն՝	606 /590/16/	- 75/75%

Ի մի բերելով այս ամենը՝ գրաբարի բոլոր ենթաշրջանների, այսինքն՝ ամբողջ գրաբարի համար կտտանանք որոշիչ շարահասության և համաձայնության հետևյալ ընդհանուր պատկերը.

Որոշիչների ընդհանուր քանակը՝ 13038

1. Նախադաս՝	9721	- 74,55%
2. Հետադաս՝	3317	- 25,44%
Եզակի ուղղականով և հայցականով՝	4622 /3029/1593/	- 35,45%
Թեք հոլովներով՝	8416 /6690/1726/	- 64,54%
1. Համաձայն՝	2714 /1263/1451/	- 32,24%
2. Անհամաձայն՝	5702 /5428/274/	- 67,75%

Ածական որոշիչ

Ընդամենը՝	8219	- 63,08%
4. Նախադաս՝	6082	- 73,99%
2. Հետադաս՝	2137	- 26,00%
Եզակի ուղղականով և հայցականով՝	2783 /1771/1012/	- 33,86%
Թեք հոլովներով՝	5436 /4311/1125/	- 66,19%
1. Համաձայն՝	1424 /410/1014/	- 26,19%
2. Անհամաձայն՝	4012 /3902/110/	- 73,80%

Վիճակագրական այս տվյալները պերճախոս վկայություններն են այն բանի, որ ամբողջ գրաբարում (V-XI դարեր), իրոք, գերակշռում էին, այն էլ պատկառելի չափերով, նախադաս և չհամաձայնեցված որոշիչները:

Ըստ սույն վիճակագրության՝ նախադաս որոշիչների գերակշռությունը մեծ չափերի է հասնում հատկապես Եղիշեի և Լաստիվերցու երկերում՝ կազմելով առաջինում 82,02 %, իսկ երկրորդում՝ 81,40 %, իսկ Եզնիկի և Գր. Նարեկացու երկերում համապատասխանաբար՝ 74,70 %, 68,62 %, մի բան, որ կարող է պայմանավորված լինել ինչպես պատկերվող նյութի առանձնահատուկ բնույթով, այնպես էլ հեղինակի նախասիրությամբ, ոճական և այլ նկատառումներով: Համաձայնության հարցում ևս առանձնանում են մի կողմից՝ Եզնիկն ու Գր. Նարեկացին, մյուս կողմից՝ Եղիշեն ու Լաստիվերցին, որոնց երկերում չհամաձայնեցված որոշիչները կազմում են համապատասխանաբար՝ 61,36 %, 65,91 %, 84,52 % և 87,68 %:

Ելնելով գրաբարի դասական, հետդասական և նախամիջին ենթաշրջանների որոշիչների շարադասական և համաձայնական յուրահատկությունների վերաբերյալ սույն վիճակագրության փաստերից՝ կարելի է որոշակի գաղափար կազմել ինչպես ամբողջ գրաբարի, այնպես էլ նրան համընկնող կամ անմիջապես նախորդող ժամանակների ժողովրդախոսակցական լեզվի շարահյուսական նույն երևույթների զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ, քանի որ լեզվական օրենքների փոփոխությունը տեղի է ունենում ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար, որ երբեմն կարող է տևել երկար ու ձիգ դարեր: Նկատի ունենալով լեզվի գրավոր և բանավոր տարբերակների փոխադարձ սերտ կապը՝ պիտի ենթադրել, որ ժամանակի խոսակցական տարբերակում և նրանից էլ շատ առաջ առավել ցայտուն են դրսևորվել նախադաս և չհամաձայնեցված որոշչային կիրառությունները, որոնք էլ իրենց ծանրակշիռ արտահայտությունն են ստացել նաև գրավոր տարբերակում: Ասվածի վառ վկայությունը կարող են լինել նաև հնագույն ժամանակներից մեզ հասած հայ ժողովրդական բանահյուսության գողտրիկ պատարիկներում պահպանված 44 որոշիչները, որոնցից 36-ը (81,81 %) նախադաս է, 8-ը (18,18 %)՝ հետադաս: 44 որոշիչների շարքում 9-ը համաձայնեցված է, 9-ը՝ չհամաձայնեցված:

Ամփոփելով մեր խոսքը՝ նորից նշենք, որ բերված վիճակագրական փաստերը մեկ անգամ ևս անտարկելիորեն հաստատում են, որ ինչպես ամբողջ գրաբարի առանձին ենթաշրջաններում, այնպես էլ նրա ամբողջ ընթացքում առավել գերակշռողը, հետևաբար և առավել օրինաչափը եղել են որոշչի ոչ թե հետադաս և համաձայնեցված, այլ ընդհակառակը, նախադաս և չհամաձայնեցված կիրառությունները, այն էլ՝ շատ մեծ չափերով:

Г. М. АВЕТИСЯН - К вопросу о позиции и согласованности определений в древнеармянском языке. - Вопрос о позиции и согласованности определений в грабаре всегда привлекал и продолжает привлекать внимание языковедов, ко-

торые высказывают, однако, самые разные, а порой и взаимоисключающие мнения. Для того, чтобы внести ясность в этот спорный вопрос, автор статьи впервые провел статистический анализ, базирующийся на репрезентативном своде текстов. И вот к каким результатам он пришел: из 13038 определений, встретившихся в исследуемых текстах, 9721 (74,56 %) оказались в препозиции, 3317 (25,44 %) - в постпозиции, 2714 (32,24 %) оказались согласованными, 5702 (67,75 %) - несогласованными. Эти данные с очевидностью показывают, что в грабаре преобладали несогласованные определения и что препозиция определений преобладала над постпозицией, причем превалирование в обоих случаях было значительным.